



# ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՁ

Տարածաշրջանային և տեղական մակարդակով  
Եվրոպային ծառայելու համար 2021 թ. կայգեր  
Մաքսիմիլիանի Մրցանակ

Ինսբրուկի երկարամյա քաղաքապետ և Տիրոլ նահանգի խորհրդարանի նախագահ դոկտոր Ալոիզ Լյուգերի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ՝ 1997 թ.-ին Տիրոլի նահանգի և Ինսբրուկ քաղաքի կողմից շնորհվել է կայգեր Մաքսիմիլիանի մրցանակը՝ եվրոպական տեղական և տարածաշրջանային քաղաքականությունում առաջադեմ նվաճումների համար: Մրցանակը շնորհվել է Եվրոպայում դոկտոր Լյուգերի վաստակի համար:

2019 թվականին կայգեր Մաքսիմիլիանի հոբելյանական տարվա նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Տիրոլի նահանգը և Ինսբրուկ քաղաքը նաև վերականգնել են կայգեր Մաքսիմիլիանի մրցանակը:

Մրցանակը նախատեսված է անհատների, հաստատությունների կամ կազմակերպությունների արտասովոր նախագծերի համար, որոնք լրացուցիչ առավելություններ են տալիս Եվրոպայի տարածաշրջանային և/կամ մունիցիպալ մակարդակներով: Նախագծի մասնակիցները պետք է լինեն հուսալի և կարողանան իրականացնել և ավարտել աշխատանքը:

Հատուկ ուշադրություն է դարձվելու այն նախագծերին, որոնք էական ներդրում են կատարում եվրոպական ներդաշնակության, եվրոպական ինտեգրման, ինչպես նաև Եվրոպայում խաղաղ գոյակցության և համերաշխության մեջ: Պետք է հղում կատարվի տեղական և տարածաշրջանային մակարդակներով: Ներկայացված նախագծերը պետք է ապահովեն լավագույն փորձը մշակելու ներուժը, որը կարող է փոխանցվել այլ համայնքներին և տարածաշրջաններին:

Հասարակական բարձր կարգավիճակը պետք է ամրապնդի Եվրոպայի գաղափարը քաղաքացիների մեջ: Նախագիծը չպետք է ուղղված լինի

շահույթ կամ այլ ակտիվներ ստանալուն և չպետք է հակասի իրավական դրույթներին կամ ընդհանուր եվրոպական իրավական սկզբունքներին:

Ներկայացված նախագծերը պետք է ունենան նորարարական մոտեցում, կիրառեն նոր մոտեցումներ կամ կազմակերպչական մեթոդներ. նաև ներառեն հետևանքների գնահատականը, նախագծի նպատակների զարգացումները կամ ակնկալվող արդյունքները: Այստեղ վճռորոշ են եվրոպական ինտեգրման տարբեր տեսակետները: Քննադատական չափանիշները ներառում են. նախագծի արդյունավետությունը, կայունությունն ու ստեղծագործականությունը, նաև Եվրոպայի հետ համագործակությանը ներգրավելու այլ թիրախային խմբերի խթանումը:

Կայգեր Մաքսիմիլիանի Մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ: Մրցանակը ներառում է վկայական, մեդալ (կայգեր Մաքսիմիլիան I-ի 1509 թ. մեդալյոն) և 10.000 եվրո դրամական մրցանակ: Հաղթող նախագծի համար տրամադրվում է դրամական մրցանակ: Մրցանակը շնորհվում է անհատին, հաստատությանը կամ կազմակերպությանը՝ տարածաշրջանային և տեղական մակարդակով եվրոպային ծառայելու համար:

Նախագծերը կարելի է ներկայացնել միայն առցանց՝ հետևյալ կայքի ինտեգրված հավելվածային հարթակի միջոցով. [www.kaisermaximilianpreis.at](http://www.kaisermaximilianpreis.at). Նախագծերը պետք է ներկայացվեն գերմաներեն, ֆրանսերեն կամ անգլերեն լեզվով: